15.02.2022թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 456067/20

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 4550 գործը և ուսումնասիրելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ _____ արձանագրությունը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՀՎԸՀ Հարկային տեսչություն-վարչության 02.11.2021թ. թիվ 4148851 ակտի՝ <<ԱՊԱՐԱՆԻ ԷՑԾ>> ԲԲԸ-ի տնօրեն Գուրգեն Ասլանյանը (ՀՎՀՀ՝ 05200554 հասցե՝ Գ' Քուչակ) ՀՀ հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել թվով 1 /մեկ/ աշխատողի գրանցման հայտը, որի համար նախատեսված է պատասխանատվություն համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի:

Կողմին հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Գործում առկա չէ առարկություն կամ բացատրություն:

Այն փաստը, որ Գուրգեն Ասլանյանի կողմից վերջին մեկ տարվա ընթացքում կատարվել է իրավախախտում (20.08.2021թ. 030339/07 որոշումը), սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 34, 244[2], 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի՝ Գուրգեն Ասլանյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ նշանակել տուգանք 20.000 (քսան հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

<u>Ծանոթություն.</u>Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝

Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն ստանալու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին. **900005240487՝** վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:

Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ստացա որոշման պատճենը _____